

ԳԻՏԱԿԱՆ ՄԻ ԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ճարտարապետության դոկտոր Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Յոգեֆ Ստրիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» ծավալուն հրկհատոր մենագրությունը¹ խոշոր ներդրում հանդիսացավ հայկական ճարտարապետության ուսումնասիրման գործում: Նրանում հեղինակը հետևողականորեն առաջ է քաշում և հիմնավորում հայկական ճարտարապետության ինքնուրույնության տեսակետը, որը մինչ այդ ժխտվում էր եվրոպական որոշ պիտանականների կողմից:

Հիմնվելով հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թ. Թորամանյանի փաստական հարուստ նյութերի և գիտական եզրակացությունների վրա, հիշյալ մենագրությունը մեծապես նպաստեց հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության լայն պրոպագանդմանը գիտական աշխարհում, ցույց տվեց հայ ճարտարապետության կազմավորման ու զարգացման ինքնուրույն ուղիները, նպաստեց նրա ազգային ինքնատիպության ճանաչմանը: Միևնույն ժամանակ հեղինակը համարձակորեն առաջ քաշեց ու իրական փաստերով հիմնավորեց այն ազդեցությունը, որ ունեցել է հայկական ճարտարապետությունը եվրոպական միջնադարի որոշ ոճերի, հատկապես ռոմանականի և գոթականի վրա:

Այդ է պատճառը, որ Ստրիգովսկու մենագրությունը իր վրա բեռեց հայրենական և օտարազգի գիտնականների ուշադրությունը, տեղիք տվեց կարծիքների աշխույժ փոխանակության, գտավ ջերմեռանդ կողմնակիցներ, ինչպես նաև առանձին հակառակորդներ:

Ներկա հոդվածում ցանկանում ենք լուսաբանել այդ աշխատության ստեղծման գործում երիտասարդ գիտնական Լևոն Ստեփանի Լիսիցյանի մասնակցությունը. արխիվային այն փաստաթղթերի հիման վրա, որոնք մատչելի են դարձել վերջերս²:

Լևոն Լիսիցյանը ծնվել է 1892 թ. Թիֆլիս քաղաքում, ճանաչված մտավորական, նշանավոր աշխարհագրագետ և ազգագրագետ, սովետահայ ազգագրության հիմնադիր Ստեփան Դանելի Լիսիցյանի (հետագայում Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ) և հայտնի մանկավարժ, «Հասկեր» մանկական ամսագրի խմբագիր Եկատերինա Լիսիցյանի ընտանիքում:

¹ J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, B. I—II, Wienn 1918.

² Նկատի ունենք Լևոն Լիսիցյանի նամակները, որոնց մի մասը պահվում էր Ստ. Լիսիցյանի արխիվում, իսկ մի մասը վերջերս գտնվել է իր անձնական արխիվում: Այդ բոլոր նամակները հարազատների կողմից հանձնվել են ի պահ Հայկական ՍՍՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ (տե՛ս ֆոնդ № 428):

Ավարտելով տեղի գիմնապիան, Լևոն Լիսիցյանը 1909 թ. ընդունվում է Մյունխենի համալսարան, ապա փոխադրվում Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը: 1910 թ. տեղի ունեցած ուսանողական ցույցերին և Յասնայա Պոլյանայում Լև Տոլստոյի թաղմանը մասնակցելու համար նա հեռացվում է համալսարանից. ձերբակալությունից խույս տալու նպատակով 1911 թ. մեկնում է Վիեննա և ընդունվում այնտեղի համալսարանը՝ ուսումը շարունակելու համար:

Զափազանց բեղմնավոր եղան երիտասարդ Լիսիցյանի համար ուսումնառության տարիները (1911—1914 թթ.) Վիեննայի համալսարանում: Զուգակցելով ուսումը գիտահետազոտական աշխատանքի հետ Ստրիգովսկու նախածեռնությունյամբ համալսարանին առնթվե՛ր կազմակերպված Արվեստների պատմության ինստիտուտում, գրելով ռեֆերատներ և հանդես գալով սեմինարներում, նա հետզհետե մասնագիտանում էր արվեստների ընդհանուր պատմության ուղղությամբ, խորամուխ լինելով հայկական մշակույթի, հատկապես անարտապետության պատմության հարցերում:

Լինելով պրոպոզիտի և գիտական լայն հետաքրքրությունների տեր, տիրապետելով մի շարք լեզուներ³, բաջատեղյակ հայկական մատենադարան աղբյուրներին, բացառիկ աշխատունակությամբ օժտված ու հայրենի մշակույթի պրոպագանդման զաղափարով խանդավառված, Լևոն Լիսիցյանը մի կատարյալ գյուտ էր Ստրիգովսկու համար: Երիտասարդը դառնում է աշխարհացի նախաշված գիտնականի բանիմաց աշակերտը և խորհրդատուն հայկական մշակույթի հարցերում, նպաստում նրա և Թորոս Թորամանյանի միջև նոստալիատի ստեղծմանը, ինչպես նաև վերջինիս Վիեննա հրավիրվելուն 1913 թ. գարնանը:

Մեծ է եղել Լևոն Լիսիցյանի ավանդը Յոզեֆ Ստրիգովսկու նախածեռնությունյամբ և գլխավորությամբ 1913 թ. սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին Հայաստան կատարած գիտարշավի գործում: Արշավախմբի կազմում, բացի ղուտ կազմակերպական կարգի հոգսերից ու թարգմանչի պարտականություններից, նա ղբաղված էր վիճական արձանագրությունների վերծանման դժվարին գործով:

Առաջին համաշխարհային պատերազմը ընդհատեց Լևոն Լիսիցյանի ուսումնառությունը Վիեննայի համալսարանում ու գիտական զբաղմունքները Արվեստի պատմության ինստիտուտում: 1914 թ. հուլիսին հայրենիք վերադառնալուց հետո խղվեցին նրա կապերը Ստրիգովսկու հետ ու հանդիպման նոր առիթներ ալլես չեղան:

Թիֆլիսից գալով Հոսյաստան, նա մտնում է հայկական կամավորական ջոկատի մեջ և մեկնում ռազմաճակատ: Այնուհետև, 1917 թ. նրան հաջողվում է մեկնել Պետրոգրադ, որպեսզի իրականացնի իր վաղեմի իղձը՝ պարապել մեծ հայագետ և գիտնական Ն. Մառի ղեկավարությամբ: Մական շուտով նա ղորակոչվում է Թիֆլիսի սոլայական հետևակային դպրոցում սովորելու: Մինչև 1920 թ. առաջին կեսը Լևոն Լիսիցյանը նորից Թիֆլիսում է: Այդ դպրոցն տվարտելուց հետո ռազմա-պատմական մի հանձնաժողովի կազմում նա ղբաղ-

³ Բացի հայերենից (ներառյալ գրաբարը) և ռուսերենից, նա ազատ տիրապետում էր գերմաներենին, ֆրանսերեն, անգլերեն և լատիներեն, ուսումնասիրում էր հունարենը, սանսկրիտը, ուրարտերենը. էլամերենը:

ված էր 1914—1918 թթ. համաշխարհային պատերազմում հայերի մասնակցության վերաբերյալ նյութեր հավաքելով և մշակելով:

1920 թ. կեսերին Լ. Լիսիցյանը փոխադրվում է Հայաստան և սովետական կարգերի հաղթանակից հետո դառնում նորաստեղծ իշխանության ջերմեռանդ գործիչներից մեկը: Դեկտեմբերի 20-ին նա նշանակվում է եկեղեցական կուլտուր-լուսավորական հիմնարկների (Մատենադարան, Զվարթնոց, թանգարան, Հռիփսիմե և այլն) ազգայնացման կոմիսար և ակտիվորեն մասնակցում է չմիաձևի կուլտուր-պատմական ինստիտուտի ստեղծմանը, միևնույն ժամանակ դասավանդելով Երևանի նորաստեղծ պետական համալսարանում:

Լևոն Լիսիցյանը մեկն էր նրանցից, ովքեր իրենց կյանքը պահպանեցին հայ ժողովրդի վերածնունդի մեծ գործին: Դաշնակցականների ավանտյուրայի ժամանակ, 1921 թ. նա բանտարկվել է էջմիածնում և փետրվարի 18-ին գաղանաբար սպանվել: Թաղված է էջմիածնում, 15 կոմունարների եղբայրական դամբարանում⁴:

Վիեննայում ուսումնառության տարիներին Լևոն Լիսիցյանի գործունեությունը ի նպաստ հայ մշակույթի, մասնավորապես հայկական անարտաբանության ուսումնասիրության, բաղմաղան դրսևորումներ է ունեցել:

Խորապես գիտակցելով, որ առանց անհրաժեշտ նյութերի (հրատարակություններ, լուսանկարներ, գծագրեր) հնարավոր չէ ոչ ուսումնասիրություններ, ոչ էլ հրատարակություններ կատարել, Յոզեֆ Ստրոֆգովսկին հանդես է գալիս մի կոչով, որում շարադրում է իր զխավորած գեղարվեստի պատմության ինստիտուտի խնդիրները՝ տարբեր ժողովուրդների պատմությունը ուսումնասիրելու ուղղությամբ և նպատակ ունենալով «...տալ հայկական հին գեղարվեստին այն առաջնորդական դերը, որը նրան պատշաճ է միջին դարերի գեղարվեստի վարձագցման մեջ թե՛ Արևելքում, և թե՛ Արևմուտքում», խնդրում է հայկական հասարակայնության լայն աջակցությունը⁵:

Դատելով այն բանից, թե ինչպիսի նախանձախնդրությամբ էր Լևոն Լիսիցյանը հետևում այդ կոչի արձագանքներին և արդյունքներին, կարելի է ենթադրել, որ դա տպագրելու հորդորողը ինքն է եղել: «Ի՞նչ եղավ իմ հոգվածը «Հորիզոնի» համար, — հարցնում է նա ծնողներին ուղղված 1912 թ. հունվարի 13-ի նամակում, — հասա՞վ արդյոք Ձեզ, տպվե՞ց թե ոչ, գուցե բոլորովին չտպվեց, ոչինչ չգիտեմ: Ինչո՞ւ ոչինչ չեք գրում: «Հորիզոնի» № 284-ում (24 դեկտեմբ.) և «Մշակի» № 283-ում (23 դեկտ.) լույս է տեսել արդեն Ստրոֆգովսկու կոչը (նույնպես և «II-րդի» մեջ), իսկ հոգվածս դեռ չկա: Խնդրեմ «Մշակի» և «Հորիզոնի» այդ համարները նույնպես և իմ հոգվածով համարը, եթե միայն նա լույս տեսնի, ուղարկեք ինձ, պիտի Ստրոֆգովսկուն տամ»: Նամակը վերջացնում է «կոչը տպվեց, տեսնենք ի՞նչ նշանակություն կունենա»⁶ տողերով:

Մեծ ծրագրերով խանդավառված երիտասարդ գիտնականը, սպասելով արձագանքի, ստիպված էր հաշորդ նամակում (1912 թ. փետրվարի 16) նշել, որ

⁴ Կենսագրական մանրամասնությունները տե՛ս «КОМУНИСТ» թերթի 1972 թ. փետրվարի 17-ի համարում:

⁵ Կոչի տեքստը տե՛ս Թ. Թորամանյան, Նամակներ, Կազմել է Ժանոթագրեց Նազիկ Խորամանյան, Երևան, 1968, էջ 414—415:

⁶ ՀՍՍՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ (ՀՍՍՀ ՊԿԳԱ), ֆ. 428, ց. 1, գ. 103, ք. 17—18:

«Մեր կոչը առաջժամ ոչ մի հետևանք չունեցավ: Թորամանյանն է միայն, որ մի քանի գրքեր ուղարկեց յուր աշխատություններից»⁷:

Ինչպես երևում է ծնողներին գրած նամակներից, նա դիմել է մի շարք անձնավորությունների (Թորամանյանին, Հալսյանցին, Երմակովին), որոնցից հնարավոր էր այդպիսի նյութեր ստանալ: 1912 թ. հունվարի 13 թվակիր նամակում Լիսիցյանը հայտնում է հորը. «...Հալսյանցի⁸ և Երմակովի⁹ պատասխանը Ստրիգովսկուն հայտնեցի: Նա պատրաստ է մի որոշ գումար հատկացնել այդ նյութերը դնելու համար: Պետք է սակայն դեռ իմանալ, Հալսյանցը որքա՞ն լուսանկարներ ունի մեղ վերաբերող, այսինքն ղուտ գեղարվեստապատմական ավերակների, եկեղեցիների, քանդակների, մանրարվեստների, շորերի, գորգերի և այլ լուսանկարներ, և քանիսո՞վ կտա այդ ընտրված լուսանկարները ինստիտուտին: Դրանից հետո միայն կարելի է դիմել Երմակովին և ընտրել նրա ժողովածուից այնպիսի նյութեր, որ Հալսյանցը չունի: Յանկալի կլինեն, որ Երմակովը մի քիչ պակասեցներ գները: Ինչ վերաբերում է Հալսյանցի գրքերին, Ստրիգովսկին պատրաստ է նրանց փոխարեն ուղարկել իր ղրքերը, իսկ «Byz. Zeitschrift» նա չունի»:

Անդրադառնալով Ե. Հալսյանցին և Երմակովին կատարած դիմումին, նա գրում է. «Այժմ սպասում ենք Հալսյանցի հավաքածուի ցուցակին: Ստրիգովսկին պատրաստ է բոլորը առնել: Ես մի փոքրիկ ցուցակ պիտի կազմեմ «Աղգագր. Հանդեսի» այն համարների, ուր կան արժեքավոր նյութեր ու կուղարկեմ Հալսյանցին, որ այդ սրահները ղրկի: Արդյո՞ք կարողացա՞ք մի որևէ գումար հավաքել Երմակովի լուսանկարները գնելու համար: Մի հարյուր հատ էլ նրանցից դար, արդեն ինստիտուտի հայկական բաժինը համեմատաբար հարուստ կլինի»¹⁰:

Քաջածանոթ Թ. Թորամանյանի գիտական հետազոտությունների արդյունքներին ու հրատարակած աշխատություններին, Լևոն Լիսիցյանը նրա նկատմամբ մեծ ակնկալություններ ուներ և չսխալվեց: Անմիջապես արձագանքելով երիտասարդ գիտնականի նախորդ տարվա վերջին ամիսներին ղրկված նամակին, Թորոս Թորամանյանը իրեն հատուկ հաշրենասիրություն մեծ գիտնականի նախանձախնդրությամբ 1912 թ. հունվարի 5-ի իր նամակով¹¹ պատրաստակամություն է հայտնում ամեն կերպ աջակցելու:

Այդ առթիվ հորն ուղղած 1912 թ. հունվարի 13-ի նամակում, վերաշարադրելով Թ. Թորամանյանի նամակի բովանդակությունը, Լևոն Լիսիցյանը գրում է. «Թորամանյանից այսօր պատասխան ստացա: Նա շատ ուրախ է, որ այդպիսի մի ինստիտուտ հիմնվել է Վիեննայում, ասում է, որ հայ գեղարվեստի եվրոպական գիտնականների ուսումնասիրության նյութ դարձնելը նրա սրտի ամենամոտիկ բանն է, և ամեն կերպ պատրաստ է աջակցել ինստիտու-

⁷ Եույն տեղում, թ. 46, 17 (ընդգծումը մերն է—Վ. Հ.):

⁸ Խոսքը հնագետ-ազգագրագետ, «Ազգագրական հանդեսի» հրատարակիչ Երվանդ Հալսյանցի (1863—1931) մասին է:

⁹ Լուսանկարիչ, որը ղրգվում էր Անդրկովկասի, Հյուսիսսային Կովկասի և Միջին Ասիայի ժողովուրդների հուշարձանների, տարադների և այլնի լուսանկարմամբ. բնեն հարուստ հավաքածու:

¹⁰ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 103, թ. 46:

¹¹ ՏԵՍ Թ. Թորամանյան, նամակներ, 1968, էջ 192—193:

տի և Սրտչիգովսկու աշխատություններին, յոեղեկություններ, պատկերներ և իր հրատարակությունները ուղարկելով: Ինստիտուտը այսօր ստացած պիտի լինի արդեն նրա մինչև այժմ դրած հոգվածները: Ասում է, որ իր «Հայ ճարտարապետության» շարունակությունը գուցե շատ երկար տևի, նյութական սղության պատճառով: Շատ ափսոս կլինի այդ: Մի՞թե Թիֆլիսում հրատարակիչ չի կարելի գտնել: Թորամանյանը պատրաստ է թույլատվություն տալ իր «Տեկորի տաճարի» գերմաներեն թարգմանության համար և ասում է, որ առանց որևիցե ակնկալության կտա այդ թարգմանության համար բոլոր կլիշեները»¹²:

1912 թ. փետրվարի 15-ի նամակում նա հայտնում է. «Այս րոպեիս եկա տուն ինստիտուտից. խոսել էի Ստրչիգովսկու հետ: Նա այսօր Թորամանյանին պատասխան էր գրել և շնորհակալություն էր հայտնել նրա ուղարկած գրքերի համար»¹³:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Ստրչիգովսկու գլխավորած արվեստի պատմության ինստիտուտում Կովկասից առաքվող նյութերը դիտվում էին որպես միջոց՝ հայկական ճարտարապետությանը նախապես ծանոթանալու և ծրագրվող ուսումնասիրություններին նախապատրաստվելու համար:

Քանի գնում ավելի հասունանում էր Կովկաս և Հայաստան գիտական արշավախումբ կազմակերպելու հարցը: Դրանում Լևոն Լիսիցյանի դերը բնավ երկրորդական չի եղել, թերևս նա հիմնական խթանողն է հանդիսացել: Այդ մասին համոզվում ենք, կարդալով նրա 1912 թ. փետրվարի 16-ի նամակի մի հատվածը: «Այսօր Ստրչիգովսկուն հարցրի,— գրում է նա,— արդյոք նա մտադիր չէ՞ ինքը մի էքսկուրսիա անելու Կովկաս և Հայաստան՝ ուսումնասիրություններ կատարելու և նյութեր հավաքելու համար: Ասաց, որ այդ նրա վաղուցվա փափազն է, բայց որ մինչև հիմա ոչ մի տեղից չի կարողացել այդ էքսկուրսիայի համար անհրաժեշտ փող ձարել: Սակայն նա հույս ունի, որ հետևյալ ամառ (1913 թվականի)— կհաջողեցնի այդ բանը: Ասաց, ոո ես էլ պիտի անպատճառ լինեմ հետը, իբրև թարգման և բացի այդ՝ բանասիրական (ֆիլոլոգիկ) և պատմական տեղեկություններ տալու, արձանագրություններ և այլն: կարդալու համար: Ես իհարկե հայտնեցի իմ ամենայն պատրաստակա-նությունս նրա հետ ձանապարհորդելու: Հույս ունեմ, որ մինչև մյուս ամառ բավականաչափ պատրաստված կլինեմ ֆիլոլոգիկ և պատմական հոդի վրա նրան օգտակար լինելու համար: Հույս հայտնեցի, որ հայ հասարակությունը նրան հյուրասեր կրնդունի և որ մեր գյուղերում ու վանքերում նա միշտ կգտնի պատրաստ օջախ և պաշարեղեն»¹⁴:

Նույն տարվա նոյեմբերի 17-ի նամակում, նորից անդրադառնալով դեպի Հայաստան գիտարշավ կազմակերպելու հարցին, նա հայտնում է. «Ինստիտուտում գիտական էքսկուրսիաների պատրաստություն են տեսնվում: Strzy-
gowski-ն շարունակ կրկնում է, թե՛ իր դասախոսությունների ժամանակ և թե՛ մասնավոր կերպով, որքա՛ն անհրաժեշտ են այդպիսի ձանապարհորդու-
թյուններ և ուսումնասիրություններ դրսում—տեղն ու տեղը: Այս ամառ երեկ

¹² Պետական արխիվի Լ. Լիսիցյանի ֆոնդում պահպանվել են Թ. Թորամանյանի «Տեկորի տաճարը» և «Էջմիածնի տաճարը» աշխատությունների՝ իր կատարած գերմաներեն թարգմա-
նությունների տեքստերը (տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 103, թ. 18):

¹³ Նույն տեղում, թ. 46:

¹⁴ Նույն տեղում, թ. 46—47:

կաղմակերպվի աղայիսի մի ճանապարհորդություն դեպի Կովկաս և Հայաստան»¹⁵,

Այսպիսով, Հայաստան կաղմակերպվելիք գիտարշավի հարցը արդեն օրակարգում էր դրված: Նրա անհրաժեշտությունը կասկածից վեր էր, հարկավոր էր միայն նյութական նախադրյալներ ստեղծել ու ինչպես հարկն է տեսականորեն նախապատրաստել արշավախմբի մասնակիցներին: Հավանաբար այս կապակցությամբ է, որ ինստիտուտի ներսում զարկ է տրվում Արևելքի, Մերձավոր Արևելքի և Կովկասի ժողովուրդների մշակույթի ուսումնասիրությանը նվիրված գիտական սեմինարների կաղմակերպմանը:

Վերոհիշյալ նամակում ասված է նաև, որ արդեն 1912 թ. վերջում ինստիտուտում մեծ փոփոխություններ են եղել: Կաղմվել է մի առանձին բաժին՝ արևելքի երկրների (Նգիպտոս, Ասորեստան, Միջագետք, Արաբիա, Սիրիա, Պարսկաստան, Հայաստան, Հնդկաստան, Չինաստան) աշխարհագրության, բաղադրվածության ու պատմության ուսումնասիրության համար: Բացի այդ, ինչպես գրում է Լ. Լիսիցյանը, ինստիտուտի աշխատակիցների համար ծրագրվում է կաղմակերպել «սեմինարի նման մի կուրս՝ գիտական ճանապարհորդությունների պատրաստելու և աշխարհագրական-պատմական հիմնական հարցեր լուսաբանելու համար»: Ստորև Լ. Լիսիցյանի նամակներից քաղվածաբար բերում ենք այն հատվածները, որոնք վերաբերում են ինստիտուտում տեղի ունեցած սեմինարներին իր մասնակցությանը:

«Այս սեմեստրում ես սեմինարի ակտիվ կերպով չմասնակցեցի, եթե չհաշվել իմ՝ Ստրչիգովսկուն աված մի բանի գրավոր ղեկույցները հայերեն մի բանի աշխատությունների մասին գեղարվեստի վերաբերյալ և մի փոքրիկ բանավոր ղեկույցում Թորամանյանի «էջմիածնի տաճարի» մասին...» (16 փետրվարի 1912 թ., ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 47):

«Վերջին շաբաթները սաստիկ դժբաղված էի, ունեցել էի Hoernes-ի մոտ նախապատմական գյուտերի մասին Կովկասից—Գոբանի գերեզմաններից գլխավորաբար (բրոնզե շրջան): Այդ ունեցելիս [ից] այժմ արդեն պրոֆեսորը գոհ մնաց: Այստեղի մուզեյում բավականաչափ առարկաներ կան Կովկասի այդ գերեզմաններից, և ես գլխավորապես դրանց հիման վրա էի պատրաստել ունեցելուս: Մի բան միայն վատ էր, որ ունեցելուս մեկ ժամ ու մի քառորդ ժամ տեղեց, այնինչ տրված ժամանակը երեք քառորդ ժամ էր» (3 մարտի 1913 թ., ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 38):

«Եկող շաբաթ սկսվելու է սեմինարը. առաջինը ես եմ խոսելու հայկական և վրացական նախապատմության ու պատմության մասին» (16 ապրիլի 1913 թ., ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 16):

«Այս երկուշաբթի ունեցելուս հայ և վրաց պատմության մասին սեմինարում տվի Առաջին անգամն էի խոսում դերմաներին, չէի գրել: Ստրչիգովսկին դոհ մնաց և ինձ շնորհակալություն հայտնեց ունեցելուս հետո: Նյութս ամբողջովին ավարտել չկարողացա թեև, որովհետև նա ինձ միայն իմ ունեցելուս կես ժամ առաջ ասավ, որ ինքն էլ է խոսելու մի կես ժամ, այնպես որ ես միայն մի ժամ, կամ մի քիչ էլ ավելի ունեցելու տրամադրությանս տակ: Բացի այդ դժվար էր թեկուզ և երկու ժամվա մեջ՝ հայ և վրաց պատմությունն անելու» (25 ապրիլի 1913 թ., ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 22):

¹⁵ Նույն տեղում. թ. 9:

Հայ ճարտարապետության ուսումնասիրության համար նյութեր հայթայթելու և Հայաստան կազմակերպելիք գիտարշավի նախապատրաստման միջոցառումների մեջ ամենից կարևորը հանդիսանում էր Թորամանյանին Վիեննա հրավիրելը՝ նրա նյութերին նախապես ծանոթանալու նպատակով: Լևոն Լիսիցյանի և Թորամանյանի՝ այդ կապակցությամբ սկսած փոխադարձ նամակագրության ու առաջինի՝ իր ծնողներին ուղղված նամակներում վերոհիշյալ հարցի վրա լույս սփռող հուշիչ և ուշագրավ տեղեկությունների կարելի է հանդիպել: Դրանցում պարզ է դառնում երիտասարդ դիտնականի ցուցաբերած շահագրգռվածությունը, կազմակերպական ակտիվ դերը, մեծ հարգանքն ու հոգատարությունը Թ. Թորամանյանի նկատմամբ: Արժեքավոր են նաև այն տեղեկությունները, որոնք լույս են սփռում Վիեննայում Թորամանյանի և Ստրժիգովսկու համատեղ աշխատանքների և դրանցում Լ. Լիսիցյանի ունեցած մասնակցության հարցի վրա:

Կատարելով Ստրժիգովսկու առաջադրանքը, Լիսիցյանը 1913 թ. մարտի 7-ի իր նամակում գրում է Թ. Թորամանյանին. «...Պ. Ստրժիգովսկին շատ կըցանկանաք, որ դուք գաք գոնե այս մի շորս ամսով Վիեննա, երբ հայկական պեղարվեստի վրա պետք է աշխատեն ինստիտուտի մեջ և Ձեր նյութերն էլ բերեք, որ այստեղ անշուշտ կարելի կլինի գործադրել գիտական ուսումնասիրությունների համար և թերևս հրատարակել: Ստրժիգովսկին պատրաստ է ինստիտուտի բյուջեից 200 կրոն, որ անում է 80 ռուբլի, հատկացնել Ձեզ իբրև օժանդակություն և խնդրում է, որ գրեմ Ձեզ այդ»¹⁶:

Անմիջապես պատասխանելով այդ նամակին¹⁷, Թորամանյանը հայտնում է իր համաձայնությունը Վիեննա ժամանել, հաղորդում է մեկնումի հնարավոր ժամանակը, տեղյակ պահում այդ կապակցությամբ ծառացած նյութական ու ալլ կարգի դժվարությունների մասին, հարցում անում, թե ո՞ր հյուրանոցում պիտի իջևանի և այլն¹⁸:

Սակայն անակնկալ հիվանդության՝ տենդի պատճառով, որով 3 շաբաթ տառապում է Թորամանյանը, նրա մեկնումը Վիեննա միառժամանակ հետաձգվում է: Իր հաջորդ նամակում (գրված մարտի 16-ին) Թորամանյանը հայտնում է Լիսիցյանին, որ ինքը ապաքինվում է ու բժիշկների կարծիքով երեի մինչև ամսի 20-ը կկարողանա բուրրովին կազդուրվել և որ այն ժամանակ հնարավորություն կունենա ձանապարհ ընկնել¹⁹:

«...Թորամանյանի մասին ի՞նչ լուր կա,— հարցնում է Լ. Լիսիցյանն իր ծնողներին 1913 թ. հունվարի 17-ի նամակում,— արդյոք լավացա՞վ նրա նյութականը և նա հնարավորություն կունենա՞ գալու մի կես տարով արտասահման: Նրան այս օրերս մի նամակ եմ պատրաստում»²⁰: «...Թորամանյանից նամակ ունեմ: Խեղճի դրությունը անտանելի է, բառի բուն նշանակությամբ հանգիստ գլուխ դնելու տեղ չունի: Եվ դեռ ներողություն է խնդրում, որ չկա-

16 Նամակի այս հատվածը հրապարակված է «Թ. Թորամանյան. նամակներ, գրքի ծանոթագրությունների բաժնում, տե՛ս էջ 419:

17 Հավանաբար Թ. Թորամանյանի նամակում ձիշտ չի նշված Լ. Լիսիցյանի նամակի ամիսն ու ամսաթիվը, այլապես հնարավոր չէր նրա մարտի 7-ի նամակին պատասխանել մարտի 2-ին: Երեի Լ. Լիսիցյանը իր նամակը գրել է փետրվարի 7-ին:

18 Տե՛ս Թ. Թորամանյան, նամակներ, էջ 208:

19 Նույն տեղում, էջ 210:

20 ՀԱՄԷ ՊԵՊԼ, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 8—9:

րողացավ իր խոսքը կատարել և ուղարկել իր մոտ եղած 200 լուսանկարները, նվեր ինստիտուտին, որովհետև միջոց չունեն թուղթ և այլ լուսանկարչական պարագաներ ձեռք բերել: Այնուամենայնիվ հուլիսը չի կորցնում, որ գուցե կարողանա ամառվա սեմինարին գալ Վիեննա: Մի՞թե այնտեղ անձինք կամ մի ընկերություն չի գտնվի, որ համաձայնվի տալ նրան այդ շորս ամսվա ընթացքում մի հասարակ ուսանողի թոշակ, ընդամենը ճանապարհածախսով՝ 300 ռուբ. հաշվով, շորս ամսական 50 ռուբլի»²¹:

Թորամանյանի Վիեննա ժամանելու²² առաջին իսկ օրվանից Լ. Լիսիցյանը սիրահոժար կերպով մեծ գիտնականին շրջապատում է ուշադրությամբ ու խնամքով, իր վրա վերցնում նրա աշխատանքների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու բոլոր հոգսերը, այդ թվում նաև կենցաղային ու նյութական: «Թորամանյանի համար սենյակ էլ գտա,— գրում է նա ապրիլի 13-ի նամակում,— հենց իմ տան տիրուհուս մոտ՝ մի կաբինետ, փոքրիկ բայց լավ և էժան, 28 կրոն»: Թորամանյանի նկատմամբ ունեցած նրա անսահման հարգանքի ու հոգատարության մասին են վկայում մի քանի այլ նամակների հետևյալ տողերը. «Հայրիկը կարծեմ փող պիտի հավաքի Թ-ի համար: Այստեղ նրա համար շոր ու վերարկու առանք և կարգի բերինք նրա արտաքինը: Նաև այստեղի ճաշերից շատ գոհ է: Առողջությունը մի բիշ խանգարված է, ինչ որ հիվանդություն} պիտի ունենա և հարկավոր է բժշկվել: Այսօր Կրպոյի²³ հետ գնալու է բժշկի» (25 ապրիլի 1913 թ.): «Ինչո՞ւ պ. Թորամանյանի փողը մինչև այժմ չի գալիս, նրա իր հետ բերածը արդեն հատնելու վրա է. խնդրեմ շուտով հասցրեք, որքան որ կա, որովհետև նրա վրա այդ բանը շատ ծանր է ազդում»:

Այսպես, հայր և որդի, մեկը՝ Թիֆլիսում, մյուսը՝ Վիեննայում, աշխատում էին հնարավորն անել, որպեսզի դյուրացնեն Թ. Թորամանյանի պայմանները, նպաստեն նրա և Ստրժիգովսկու գիտական համագործակցությանը: Լիսիցյանների կողմից Թորամանյանի նկատմամբ ցուցաբերած սրտառուչ վերաբերմունքի, նրա հայրենանվեր դիտական գործունեությանը բերած աջակցության մասին իր նամակներում վկայում է նաև ինքը՝ Թորամանյանը: Վիեննայից հունիսի 11-ին Ստ. Լիսիցյանին ուղղած նամակում²⁴ նա խորին շնորհակալություն է հայտնում նյութական օգնության, ինչպես նաև այն բանի համար, որ «...պ. Լեոնը... ծայրահեղ հոգածությամբ կմտածե և կգործե իմ մասին»: Դատելով Թորամանյանի կողմից Ստ. Լիսիցյանին ուղղված այլ նամակներից²⁵, Լիսիցյանները իրենց հոգատար վերաբերմունքը մեծ գիտնականի նկատմամբ շարունակել են նաև հետագա տարիներին:

Լ. Լիսիցյանի՝ ծնողներին հասցեագրած և 1913 թ. ապրիլ—հունիս ամիսներին վերաբերող նամակները որոշ չափով լուսաբանում են նաև Թորամանյանի կատարած աշխատանքը Վիեննայում, նրա հանդիպումները արվեստի պատմության ինստիտուտում, իր տարած նյութերի քննության արդյունքները, կայացած համաձայնությունը:

21 Նույն տեղում, թ. 22:

22 Մոտղներին ուղղված 1913 թ. ապրիլի 16-ի նամակում Լիսիցյանը գրում է. «Այսօր եկավ պ. Թորամանյանը և յուր բերավ ձեր մասին»:

23 Լ. Լիսիցյանի քննություն:

24 Թ. Թորամանյան, նամակներ, էջ 215—216:

25 Նույն տեղում, էջ 254—256, 260, 261:

«...Թորամանյանը այժմ աշխատում է ինստիտուտում,— գրում է նա իր 1913 թ. ապրիլի 25-ի նամակում,— ղբաղված է ֆրանսերեն գրականությունը գլխավորաբար: Ափսոս որ գերմաներեն չգիտե: Ֆրանսերենն էլ այնքան լավ չէ: Նրա նյութերը Ստրիգովսկին տեսավ. շատ քանկարժեք բաներ են (ընդ-գծումը մերն է— Վ. Հ.): Բայց թե ինչպես պիտի գործադրվի այդ ամենը, պի-տի կարողանա՞ մշակվի և հրապարակվի արդյոք, և արդյոք Թորամանյանը որչա՞փ կարևոր ուժ է դիտական տեսակետից՝ այդ ամենը պետք է երևա մի քանի շաբաթից հետո, երբ սեմինարի աշխատությունները մի քիչ առաջ կեր-թան և մենք նյութի մեջ խրվենք: Թորամանյանի նյութերի կեսից ավելի մեծ մասը՝ էսքիզներ են, որոնք մշակության և մաքուր ու լրիվ գծագրության կա-րոտ են հրատարակության համար: Այդ շատ մեծ աշխատանք է և շատ ժա-մանակ պիտի պահանջի»²⁶:

Մեկ ուրիշ, նույն թվականի հունիսի 10-ին գրած նամակի մեջ Լ. Լիսից-յանը ավելի մանրամասն է անդրադառնում Թորամանյանի Վիեննայում գտնը-վելու ժամանակաշրջանին: «Իմ առաջին ռեֆերատից հետո,— գրում է նա,— ես ուրիշ ռեֆերատների ժամանակ վիճաբանում էի և նկատողություններ էի անում: Strzygowski-ն առաջարկեց ինձ մշակել հայ ճարտարապետության պատմությունը և վերցնել այդ իբրև դիսերտացիա: Այժմ սակայն, ինչպես երևում է, այդ գործը ավելի ևս պիտի ընդարձակվի: Մի մեծ ծրագիր պիտի կաղմվի, մեջը պիտի մտնեն Strzygowski-ն, Թորամանյանը և ես— նպատակն է՝ գերմաներեն լեզվով հայ-վրաց ճարտարապետության մի հիմնական ուսում-նասիրություն տալ. ամեն մեկս ստանձնում ենք որոշ պարտականություն— Strzygowski-ն պատրաստ է ինստիտուտի կողմից Թորամանյանին հնարավո-րություն տալ նրա աշխատանքները լրացնելու համար, պահանջվում է մի վեց ամիս ճամփորդելու և պակասները լրացնելու համար, և բացի այդ մի երկու տարի (ձմեռ)՝ հավաքած նյութերը մաքուր նկարելու հրատարակության հա-մար և գրվելիքը գրելու, բայց միայն այն դեպքում, եթե ես մնամ ինստիտու-տում և աշխատեմ այդ նյութի վրա մինչև աշխատանքը ամբողջովին զուլիս գա»: Նույն նամակում, անդրադառնալով Հայաստան արշավախումբ կազմա-կերպելու և Թորամանյանի նյութերի մշակման հարցին, նա նշում է. «Իսկ սեպտեմբերին կմիանանք Strzygowski-ի հետ, եթե գա, իսկ եթե ոչ՝ մենք Թորամանյանի հետ միասին միտք ունենք ձամբորդելու. նա էլ հուլիսին ուզում է վերադառնալ: Թորամանյանը ասում է, որ իրեն իր աշխատանքը լրացնելու համար, ամենադժվար, ժամանակը կլանողն՝ էսքիզները մաքուր նկարելն է: Պետք է վարձել մի նկարիչ-պոլիտեխնիկումի ուսանող, օր[ինակի] համար, որ շուտ լինի. հարկավոր է երկու, առնվազն մեկ և կես տարի: Ուրեմն ես, եթե պայմանը կապենք, պիտի մնամ նույնքան ժամանակ Վիեննա»:

Վերը բերված տողերից պարզ է դառնում, որ Թորամանյանի Վիեննա զննելու կապակցությամբ արվեստի պատմության ինստիտուտում հայ ճարտա-րապետության պատմության ուսումնասիրման ուղղությամբ նախապես ըն-դունված ծրագրում որոշ փոփոխություններ են մտցվում, ընդհանուր ջանքերի մեջ ներգրավելով նաև Թորամանյանին: Նույն այդ տողերից տեղեկանում ենք, թե նախկին և ճշտված ծրագրերում ինչպիսի կարևոր նշանակություն է տրվել Լևոն Լիսիցյանի մասնակցությանը:

²⁶ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 22:

«Թորամանյանը, — շարունակում ենք կարդալ նամակում, — կուղարկի տեղեկագրեր և նյութեր, ես պիտի դրանք թարգմանեմ կամ մշակեմ գերմաներեն հրատարակության համար: Մանրամասնությունները դեռ որոշ չեն, բայց բոլոր ծրագրերը պիտի երեք մասից բաղկանան, առաջինը՝ հայոց ճարտարապետության վերաբերյալ նյութեր, ղլխավորապես ուրեմն Թորամանյանը, պետք է տամ ես գերմաներեն, երկրորդը՝ ռուս լեզվով հրատարակած (Уба-ров-ի Mat. po arx. Kavk. և այլ), վրաց ճարտարապետության նյութերը տամ գերմաներեն լեզվով: Եվ երրորդ, իբրև այդ առաջին երկուսի բնական լեզվի ու վերջավորություն պիտի գա իմ աշխատությունս հայ նախնապետության մասին, որ պիտի հրապարակվի ինստիտուտի կողմից (ընդգծումը մերն է — Վ. Հ.): Strzygowski-ն ուզում է, որ ծրագիրը մանրամասն կերպով մշակվի և թղթի վրա մի պաշտոնական կոնտրակտ կազմվի, որ ամեն մեկս պարտավորված լինի: Երևի այս շաբաթ արդեն կմշակվի... Strzygowski-ն ինձ մի քանի օր առաջ ասավ, որ նա շատ է ցանկանում, որ մենք այդ աշխատանքը սկսենք և որ նա վստահություն ունի ինձ վրա և կարծում է, որ, իր ասելով, ինձնից դուրս պիտի գա „eine tüchtige Wissensschafliche kraft“²⁷: Միայն եթե այս փոխադարձ պարտականությունները մենք հանձն առնենք, նա պատրաստ է այս տարվա սեպտեմբերին գալ Կովկաս, հիշատակարանները անձամբ տեսնելու, փող քիչ կա, երևի կերթա ինքը, Թորամանյանը և ես. նա աղաթ է միայն սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբեր (այստեղի հաշվով): Թորամանյանը ստանալու է այժմ ինստիտուտից 400 կրոն. այդ գումարը նշանակված էր իբրև մրցանակ ամենալավ աշխատության համար հայ գեղարվեստի վերաբերյալ որևէ մեկ նյութի վրա»²⁸:

Վերջապես իրականանում է վաղուցվա փաշփայած ծրագիրը՝ Հայաստանի պատմա-նարտարապետական հուշարձանները տեղում ուսումնասիրելու նպատակով գիտական արշավախումբ կազմակերպելու վերաբերյալ: 1913 թ. աշնանը Յուզեֆ Ստրժիգովսկու գլխավորությամբ Հայաստան է ժամանում մի արշավախումբ, որի մեջ մտնում էին Լևոն Լիսիցյանը և Հենրիխ Գլյուկը²⁹: Իր մեջ ներառնելով նաև Թ. Թորամանյանին, վերջինիս առաջնորդությամբ արշավախումբը անցնում է աշխատանքի, այցելելով տարբեր հուշարձաններ և հուշարձանախմբեր³⁰:

Լևոն Լիսիցյանի արխիվում պահպանված մի երկու նամակ՝ գրած իր ծնողներին էջմիածնից սեպտեմբերի 5-ին և 10-ին, հնարավորություն են տալիս որոշ գաղափար կազմելու արշավախմբի աշխատանքներում նամակների հեղինակի մասնակցության մասին:

²⁷ Մի կարևոր գիտական ուժ (գերմ.):

²⁸ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 62:

²⁹ Վիլհելմի համալսարանի արվեստի պատմության ինստիտուտի գիտական աշխատակից, արվեստաբան, պրոֆեսոր-դոկտոր, հատկապես հետաքրքրվում էր վաղ քրիստոնեական շրջանի բաղիլիկ եկեղեցիների ճարտարապետությամբ: Նրա գրչին է պատկանում Ստրժիգովսկու «Die Baukunst der Armenier...» գրքի առաջին հատորում գետեղված «Das tan-nengewölbte Langhaus» գլուխը:

³⁰ 3. Ստրժիգովսկու գրքում (տե՛ս Die Baukunst..., էջ 14—27) բերված են մանրամասն տեղեկություններ Հայաստան կազմակերպված արշավախմբի վերաբերյալ, սակայն այնտեղ ցույց տրված ժամկետները չեն համընկնում Լ. Լիսիցյանի նամակներում նշված ժամկետների հետ: Ըստ Ստրժիգովսկու տեղեկությունների, Լ. Լիսիցյանը Կովկաս է մեկնել նախօրոք՝ նախապատրաստական աշխատանքներ տանելու համար: Արշավախմբի մնացած անդամները՝ Ստրժիգովսկին, Հ. Գլյուկը և էթնոլոգ է. Գլյուտները (որ հետո Հառիճուս անջատվում է ար-

Սեպտեմբերի 5-ին գրված նամակից պարզվում է, որ արշավախումբը նախապես ժամանել է Ալեքսանդրապոլ, այստեղ, ըստ պայմանավորվածության, հանդիպելով Թորամանյանին: Հետադոտական ուղևորությունների հենց առաջին օրը արշավախումբը այցելել է Մարմաշեն: «Մյուս օրը, — շարունակում է նա, — ճամփա ընկանք Արթիկ, այնտեղի երկու եկեղեցիները մեծ արժեք ունեն: Տեսանք նաև Լմբատա վանքը, Մաղարչուղը ու Մակարա-վանքը, ամեն տեղ չափում ենք (այսինքն՝ չափագրում ենք — Վ. Հ.) ու լուսանկարում»³¹:

Ժամանակ շահելու համար Լ. Լիսիցյանն ու Հ. Գլյուկը հաջորդ օրը առանձին գնում են Շիրվանջուղի միանավ բաղիլիկան տեսնելու և ուսումնասիրելու, իսկ արշավախմբի մնացած անդամները՝ Հառիձ, Նամակը հնարավորություն է ընձեռում տալու գիտական արշավախմբի հետագա երթուղին՝ Քասախ (Ապարան), Աշտարակ և Եղվարդ, ուր ամենուրեք ղբաղվել են վաղ շրջանի եկեղեցական շենքերով: «Ամեն տեղ մեզ հրաշալի ընդունում են, — նշում է նա, — ոչ մի դժվարություն չենք քաշում»:

Եթե առաջին նամակում Լիսիցյանը ուղղակի հիշատակում է արշավախմբի այցելած վայրերը՝ առանց տեսածի մասին որևիցե կարծիք հայտնելու, ապա երկրորդ նամակը ուշագրավ է դիպուկ բնութագրություններով, որոնք վկայում են նրա՝ հայ ճարտարապետության, հնագիտության և վիճագրության մասին ունեցած լուրջ պատրաստությունը, գրական աղբյուրներին քաջածանոթությունը:

Բավականաչափ ծավալուն այդ նամակից իմանում ենք, որ բաժանվելով արշավախմբի անդամներից՝ Ստրժիգովսկուց և Թորամանյանից, որոնք մնում են Գառնիում և Գեղարդում, նա մի գյուղացու ուղեկցությամբ բարձրանում է Գեղամա լեռները³², որպեսզի տեսնի, լուսանկարի և չափագրի «Աժդահայուտ»-ում գտնվող ժայռապատկերները և աժդահաները (վիշապները), որոնք, նրա ասելով, արդեն ծանոթ են ն. Մառին:

Տեսածի մասին Լ. Լիսիցյանը հայտնում է. «Գրեթե, որ դեռ բոլորովին անծանօթ են գիտական աշխարհին, դուրս եկան նախապատմական նկարներ քարերի վրա, ես արտանկարեցի 9 այդպիսի պատկերներից և երկուսը լուսանկարեցի, լուսանկարելը շատ դժվար էր, որովհետև խորը չեն քանդակված, այլ միայն «քերված» են սև քարերի մեջ. գլխավորապես եղջերուների չափազանց պրիմիտիվ պատկերներ են. պատահում են նաև սարի այծի, թռչունի և շան նկարներ և մի քանի որսորդական տեսարաններ, մարդը՝ աղեղով ու լարված նետով, շուրջը՝ եղջերուներ (դրանցից լուսանկարեցի)»³³: Այնուհետև նամակի

շավախմբից ու միանում Թիֆլիսում), Վիեննայից մեկնում են սեպտեմբերի 7-ին և 11-ին ժամանում Թիֆլիս: Այստեղ մի քանի օր նախապատրաստվելուց, համապատասխան թույլտվություններ ձեռնարկելուց հետո արշավախումբը մեկնում է Թիֆլիսից և սեպտեմբերի 14-ին հասնում Ալեքսանդրապոլ, ուր միանում է Թորամանյանը: Նույն օրն էլ այցելում են Մարմաշենի հուշարձանները: Արշավախումբը Հայաստանում աշխատում է շուրջ 20 օր (Ստրժիգովսկին մանրամասն լրագրում է այցելած հուշարձանները) և հոկտեմբերի 4-ին վերադառնում Թիֆլիս: Հաջորդ օրը հայկական պատմական ընկերությունում տեղի է ունենում Ստրժիգովսկու դասախոսությունը, որը տեղն ու տեղը ընդգծվում է Լ. Լիսիցյանը: Արշավախումբը Թիֆլիսից մեկնում է հոկտեմբերի 8-ին:

³¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 53:

³² Այդ մասին հիշատակում է նաև Յ. Ստրժիգովսկին (տե՛ս նաև ՀՍՍՀ ԳԱ «Լրաբերի» (հաս. գիտ.) 1972 թ. N 1-ում հրատարակված Լ. Լիսիցյանի ռեֆերատը Գեղամա լեռների ժայռապատկերների մասին):

³³ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 50—51:

հեղինակը փորձում է համեմատություններ կատարել ուրիշ տեղերում գտնված այդ կարգի հնագիտական նյութերի հետ և եզրակացնում է. «Ուրիշ տեղ Կովկասում այգպիսի նկարներ, եթե չեմ սխալվում, անծանոթ են: Անկանոն քարակույտերի (բազալտ, հրաբխային քարի նմուշներ ունեւ հետս) քարերի վրա են գտնվում այդ նկարները, ցրված մոտ մի քառակուսի վերստ տարածության վրա: Բացի նկարներից (պատկերներից), մի քանի քար էլ չգտնվեցավ, որոնց վրա եղած փորվածքները արդեն «գիր» կարող են համարվել»³⁴:

Մասնագիտորեն ճիշտ են և մինչև այժմ իրենց գիտական արժեքը չեն կորցրել Լիսիցյանի նամակում արված դիտողությունները Հայաստանի վաղ բրիստոնեական շրջանի մի շարք եկեղեցական հուշարձանների, ինչպես նաև վիմագրական նյութերի մասին: «Դարձյալ էջմիածին ենք,— գրում է նա,— այսօր եկանք Գառնիից Դվինով: Շատ նոր բան կա, և մեր ճամբորդությունը արդեն որոշ արդյունքների է հասել և բավականաչափ նյութ է հավաքվել մասամբ դեռ անծանոթ և անուշադիր մնացած: Եղվարդի եկեղեցին, որ փորել է (այսինքն պեղել—Վ. Հ.) հաշիկը³⁵, 570—80 թվ. շինած եկեղեցի է և ունի իր շինողի՝ Մովսես կաթողիկոսի արձանագրությունը. նա մի երկար՝ բազիլիկի ձև ունի, շորս զույգ մույթերով և երեք աբսիդով: Աշտարակի բազիլիկան, որի վրա առաջին անգամ ուշք էր դարձրել Թորամանյանը՝ թեև արձանագրություն չունի, բայց անշուշտ հնագույն եկեղեցիներից մեկն է, երևի 6-րդ դ.: Գառնիում մի եկեղեցի գտնվեց, որը ամբողջովին ուղադրությունից փախած էր, մի մեծ բազիլիկա, մի աբսիդով, առանց ավանդատների, այդ թերևս ամենահին ձևը լինի: Դվինում հաշիկի փորած եկեղեցին էլ մի ահագին անակնկալ էր, իր չափերով գերազանցում է բոլոր մեր տեսածները՝ ընդհանրապես երկար ձգված մի բազիլիկի նույն ձևը ունի ինչ որ Քասախը, Տեկորը, Աշտարակը, Երեւոթը, Եղվարդը և այլն: Երեք աբսիդ ունի: Թորամանյանի կարծիքով V դարին է պատկանում: Համենայն դեպս մինչև VII դար շինած պետք է լինի, հետևազույն հավելված աբսիդներով հյուսիսային և հարավային պատերի վրա³⁶: Բացի այդ Թորամանյանը, շնորհիվ հ. Գարեգինի³⁷, որը, Ձեզ շատ բարև է անում, իր ուղադրությունն էր դարձրել Ավանի եկեղեցու վրա, որը շինել է Հովհանն կաթողիկոսը 6-րդ դ. վերջը: Հ. հաշիկը ունի դրա (այժմ իր տեղը էլ չգտնվող) արձանագրությունը 580 թվականից, որը սակայն եկեղեցու շինության չի վերաբերում»³⁸: «Ընդհանրապես պետք է ասել, որ Եղվարդի և Ավանի եկեղեցիների արձանագրությունների հայտնվելով, մեր հնագույն՝ արձանագրություններով վավերացված եկեղեցիները դրանք պետք է համարվեն. մինչև այժմ Հոփսիմեն էր Կոմիտասի 618 թ. արձանագրություններով, եթե չհաշվենք Տեկորը, որի արձանագրությունները, 5-րդ դարի Սահակ Կամսարականի համարածը, կասկածներ են ներշնչում. Ավանի եկեղեցին, հինգ զմբեթանի,

³⁴ Նույն տեղում:

³⁵ հաշիկ վարդապետ Դադյանը:

³⁶ Թորամանյանի այս նախնական կարծիքը միանգամայն նշանակալից հետազոտությունների ժամանակ (տե՛ս Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 49—56: Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 88—101):

³⁷ Նկատի ունի Գարեգին Հովսեփյանին:

³⁸ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 49—52. արձանագրությունը հրապարակված է Կ. Ղաֆադարյանի կողմից (տե՛ս նրա «Ավանի երկրկվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945):

ունի Հռիփսիմեի ձև, և Թորամանյանի էջմիածնի մայր եկեղեցու վերակազմության ճշտության ապացույցներից մեկն է»³⁹։

Դատելով երկրորդ նամակից, արշավախումբը էջմիածնից Թալինով պետի վերադառնար Ալեքսանդրապոլ։ «Վաղը գնում ենք Թալին»,— գրում է նա,— մեր ճամփորդության մեծ մասը դեռ մեր առաջն է»։

Ստրժիգովսկու ծրագրում, բացի հետադոտական ուղևորություններից, մտնում էին նաև հրապարակային դասախոսություններ Թիֆլիսում և Բաքվում։ Դրանց կազմակերպման գործում նույնպես մեծ է եղել Լ. Լիսիցյանի և իր հոր դերը։ Ծրագրված դասախոսություններից Թիֆլիսինը կայացել է. այդ մասին տեղեկանում ենք Լ. Լիսիցյանի արխիվում պահպանված մեկ ուրիշ փաստաթղթից՝ «Թերթինից», որի հեղինակը, անտարակույս, ինքն է։ Այդտեղ կարգում ենք. «Պրոֆ. Ստրժիգովսկու դասախոսությունը, որ տեղի ունեցավ ամսի 24-ին (հավանաբար սեպտեմբերի— Վ. Հ.) ժողովարանում, մի նոր շրջան է բացում հայ գեղարվեստի ուսումնասիրության մեջ։ Մի նոր շրջան ենք ասում, որովհետև նա մոտենում է հայոց գեղարվեստին՝ մինչև այժմ անսովոր մի վճռականությամբ, նոր կերպով է դնում այդ գեղարվեստին վերաբերող հարցերը և կտրուկորեն հրավիրում է մեզ նրա ամենալուրջ քննության և ուսումնասիրության... Այժմ ուսումնասիրության պայմանները փոխվել են,— հայոց պատմության և արձանագրությունների ուսումնասիրությունը մեծ առաջադիմություն է արել այս տասն-քսան տարվա ընթացքում, կատարված պեղումները եկել են ապացուցանելու շատ բան, հավաքվել են բազմաթիվ նոր նյութեր ու փաստեր, վերջապես՝ մասնավոր ուսումնասիրություններ են կատարվել հայոց գեղարվեստին վերաբերող զանազան հարցերի մասին և մնացուն աշխատողներ են առաջ եկել այդ հոգի վրա։ Հասել է ըուպեն, երբ հայ գեղարվեստի ուսումնասիրությունը պիտի դրվի հաստատ հիմքերի վրա։ Եվ ահա՝ այդպիսի մի լուրջ ուսումնասիրության կոչ էր պրոֆեսոր Ստրժիգովսկու դասախոսությունը»⁴⁰։

Վերադառնալով Վիեննա, Ստրժիգովսկին և իր «աջ թևը»՝ Լևոն Լիսիցյանը, առավել ոգևորությամբ շարունակում են գործել՝ հավաքած հարուստ նյութերի գիտական մշակման և հաջորդ տարվա անելիքները ծրագրելու ուղղությամբ։ Դրանց մասին տեղեկություններ կարելի է քաղել Լ. Լիսիցյանի 1913 թ. տարեվերջի և 1914 թ. նամակներից։ Նամակների միջոցով երիտասարդ գիտնականը սկսում է նախապատրաստական աշխատանք տանել Թորամանյանին նորից Վիեննա հրավիրելու ուղղությամբ։ «... Ինչպե՞ս է Թորամանյանի գործը,— հարցնում է նա 1913 թ. դեկտեմբերի 16-ի իր նամակում,— ես մի բաց նամակ ուղարկեցի հայրիկին, ուր գրում էի, որ այժմ պահանջվում է միայն միջոց տալ Թորամանյանին անցյալ տարվա պես գալու Վիեննա. այդ դեպքում նա կարող է մինչև ամառ պատրաստել հրատարակության համար իր ճարտարապետական հիշատակարանների հնագույն մի շարք և հրատարակել մեր ճամփորդության հետ միասին։ Նա այդպիսով իր հրատարակությունը սկսած կլինի... և այնուհետև ինքնըստինքյան կհարթվեն Թորամանյանի համար ճանապարհները։ Այստեղ էր մի քանի օր առաջ Ստրժիգովսկու բարեկամ, պրոֆ. Գրյունայդենը (Մոսկվա), որի միջոցով, կարող է պատահել, որ Թորաման-

³⁹ Նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 49—52։

⁴⁰ Նույն տեղում, գ. 44, թ. 2։

լանի նյութերի (կամ նյութերի մի մասի՝ օր. Անիի) հրատարակությունը իր վրա առնի Մոսկվայի հնագիտական ինստիտուտը: Ստրիգովսկին և Գրյունայ-յենը վճռեցին մի ուրիշ փորձ էլ անել: Ստրիգովսկին մի նամակ գրեց տ. Վ. Քանանյանին, որ Գրյունայգենը տարավ իր հետ Մոսկվա»⁴¹: 1914 թ. հունվարին գրած նամակում նա հարցում է կատարում ծնողներին. «...Ինչպե՞ս է Թուրամանյանի բանը. ո՞չ մի արդյունք, ո՞չ մի քայլ: Արդյոք որևէ հնարավորություն չկա՞ նրան Վիեննա գալու միջոց տալու համար, գոնե անցյալ տարվա պես»⁴²:

Վերոհիշյալ և ուրիշ նամակներից կարելի է որոշ գաղափար կազմել նաև նախատեսված ծրագրի իրականացման ուղղությամբ իր՝ Լևոն Լիսիցյանի կատարած աշխատանքների մասին. «...Ես սկսել եմ արդեն արձանագրությունների համար նյութեր հավաքել, այդ գիրքը»⁴³ ինձ համար չավագանց կարևոր կլինի, և եթե Մխիթարյանները շատանան, ինստիտուտը իր համար բերել կտա»⁴⁴: 1913 թ. դեկտեմբերի 16-ի նամակում նա գրում է. «Այստեղ դասախոսությունները վերջացան և տունները (ծննդյան— Վ. Հ.) սկսվել են: Ես այս րոպեիս պարապում եմ՝ կես օր ճամփորդության համար, իսկ կես օր՝ դուտ գեղարվեստա-պատմության: Եթե կարողանամ բավականաչափ պատրաստվել, կառնեմ բացի արձանագրություններից նաև գեղարվեստական որևէ մի գլխի մշակումը: Կաշխատեմ: Արձանագրական նյութերի մշակության ժամանակ իմ ղլխավոր նպատակս կլինի ճշտորեն որոշել շինության ժամանակը և պայմանները. այդ բանի համար բավականաչափ նյութ կա, նաև մեր պատմիչները: Տեսնենք կհաջողվի՞ արդյոք ստանալ հ. Խաչիկից Եղվարդի մեծ՝ VI դարի արձանագրությունը (Մովսես կաթողիկոսի), որի էստամպաժը նա տվել է Բասմաջյանին հրատարակելու համար արդեն վաղուց ի վեր, բայց դեռ չի հրատարակվել: Հ. Խաչիկը խոսք տվեց ինձ, որ կգրի Բասմաջյանին, որ ինձ մի պատճեն ուղարկի. կասկածում եմ»⁴⁵: Հունվարին (առանց ամսաթվի) գրված մի այլ նամակում նա հայտնում է ծնողներին. «Մեր ճամփորդության աշխատությունը կարող է դառնալ շատ հետաքրքիր մի բան: Ինձ ընկնում է ամենից առաջ՝ արձանագրական և բացի այդ՝ պատմական և աշխարհագրական մասը, գուցե գեղարվեստա-պատմական մի գլուխ էլ հանձն կառնեմ, այդ դեռ անորոշ է»⁴⁶:

Ձափազանց հետաքրքիր են Ստրիգովսկու տպավորությունները Հույաստանի մասին՝ շարադրված Լ. Լիսիցյանի փետրվարի 24-ի նամակում: «Ստրիգովսկին ամեն օր աշխատում է ճամփորդության նյութի վրա,— գրում է նա,— ինչպես երևում է ինքը կանի ամբողջ գեղարվեստա-պատմական մասը: Եվ քանի գնում է ավելի ու ավելի է հափշտակվում: Ասում է, որ հավվագյուտ է այնչափ կանոնավոր, բնական կապ ունեցող և ամբողջական զարգացում, որ մենք նկատում ենք դարերի ընթացքում հայ ճարտարապետության մեջ, և ուր ոչ մի կասկած չկա. որ այդ նախաբանալիությունը ինքնուրույն է (ընդգծումը մերն է— Վ. Հ.): Նույնպես կրկնել է մի քանի անգամ, որ եթե հնարավոր է այդ

⁴¹ Նույն տեղում, գ. 104, թ. 65—66:

⁴² Նույն տեղում, գ. 105:

⁴³ Խոսքը «Շողակաթ» ժողովածուի մասին է, որ խնդրել էր իրեն ուղարկեն:

⁴⁴ ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 1, գ. 105:

⁴⁵ Նույն տեղում, գ. 104, թ. 67:

⁴⁶ Նույն տեղում, գ. 105, թ. 2:

ամենը այժմ թափանցել, այդ միայն շնորհիվ Թորամանյանի կատարած աշխատանքի և ճամփորդության ժամանակ՝ նրա ուղեկցության»։ Այնուհետև նամակի վերջում տեղեկացնում է, որ «մարտի 17-ին Ստր-ին գնում է Մոսկվա, կարծեմ նաև Պետերբուրգ։ Նա մտադիր է անձամբ դիմել ալնտեղ մի քանի հայ հարուստների Թ.-ի համար»⁴⁷։

Նույն նամակում Լիսիցյանը գրում է, որ Ստրժիգովսկին հետաքրքրվում է Թորամանյանի մասին, շարունակ հարցնում՝ «Ի՞նչ լուր Թ.-ից», «Ե՞րբ կգա», «Ի՞նչ անենք, որ կարողանա գալ», «Ի՞նչ լավ կլինի, եթե նա շուտով գա, մենք կարողանք իմ գրածները և միասին վերաստուգենք»⁴⁸ և այլն։ Հաջորդ ամիսներին ոչ մի նամակ չի գրում տուն՝ առանց Թորամանյանի անունը հիշատակելու։ «Արդյոք Թորամանյանը կարո՞ղ է հուսալ մոտ ապագայում որևիցե, թեկուդ փոքրիկ օժանդակության։ Հայրիկ ջան, գոնե բացիկ գրի՛ր (6. 6. 1914)⁴⁹։ «Թորամանյանը պիտի ուղարկի հայրիկին էքսպեդիցիայի սալակները (նեգատիվները), որ խնդրեմ շուտով փոխադրեք Ստրժիգովսկու անունով, ծախսերը հանեք իմ ամսականից, իսկ ես այստեղ կստանամ։ Խնդրեմ արագ արեք այդ»։ Մեկ ուրիշ՝ նույն թվականի հուլիսի 11-ին գրած նամակից երևում է, որ Ստրժիգովսկին և Լ. Լիսիցյանը ոչ մի առիթ բաց չէին թողնում բանիմաց մարզկանց հետ քննարկելու համար իրենց ծրագրած աշխատության բովանդակությունը, սկզբունքները։ «Երեկ ճամփու դրի հ. Գարեգինին, որ եկել էր Լայպցիգից։ Բեռլինում արդեն պիտի սկսվի իր մանրանկարների տպագրությունը, որ կտևի երկու տարի և կարժենա 35 000 մարկ։ Նա մնաց այստեղ երկու օր և աչքի անցրեց Ստրժիգովսկու և ինձ հետ մեր գրքի ամբողջ դասավորությունը և գլուխները։ Նաև իմ արձանագրություններից մի քանիսը, որ արդեն պատրաստել եմ, կարդացի իրան։ Բավարար գտավ։ ...Արուճի (Թալիշ), Մրենի և Բազարանի (իմա՝ Բազավան— Վ. Հ.) արձանագրությունները, բավականին ընդարձակ եղան։ Շատ բանի մեջ համաձայն չեմ Հ. Օրբելու հետ, որը հրատարակել էր դրանք «Христианский Восток»-ի մեջ»⁵⁰։

Վիեննայից հորը հասցեագրած հուլիսի 24-ի նամակում նախ և առաջ հայտնելով իր գոհունակությունը այն բանի համար, որ «...կարողացար դարձյալ փող հասցնել Թորամանյանին», Լիսիցյանը շարունակում է. «Ես վախենում էի, որ նա չի կարողանա ճամփորդել այս ամառ փողի պատճառով։ Ո՞ր է նա այժմ, արդյոք լուր ունե՞ս։ Ես նրանից նամակ եմ սպասում։ Մեր գիրքը պատրաստ կլինի երեկ նոյեմբեր—դեկտեմբերին. որոշ հարցեր կան, օր[ինակի] համար՝ տեխնիկայի և մատերիալի (շինության) նաև այլ հարցեր, որ Ստրժիգովսկին ուղում է, ավելի դանդաղ մշակել և մասնավորապես՝ սպասել, որ Թորամանյանը գա, որոշ հարցեր կան նրա ներկայությամբ մշակելու համար»⁵¹։

Սակայն Թորամանյանին վիճակված չէր երկրորդ անգամ Վիեննա գալ, թեև դրա համար անհրաժեշտ նյութական միջոցների հալթայթման հարցը կարգավորված էր Ստ. Լիսիցյանի անմիջական ջանքերով։ Պատճառը հուլիսի 24—25 թվակիր նամակից կարող ենք կռահել. «...Ինչպես երևում է,—գրում է

47 Նույն տեղում, թ. 7—8։

48 Նույն տեղում, թ. 9։

49 Նույն տեղում, թ. 34։

50 Նույն տեղում, թ. 41—42։

51 Նույն տեղում, թ. 47։

ծնողներին և իսկ իսիցյանը, — պատերազմը կրնդ հանրանա և կդառնա եվրոպական. Ռուսաստանը չի ուզում մնալ անտարբեր: Բուլղարները կկոզեն երեխաներին հետ, իսկ թուրքերը՝ հույների հետ: Հայաստանի վիճակը նույնպես պիտի վճռվի, հայերը պետք է ամենալուրջ կերպով պատրաստվեն, այսօր մի քանի ժամից հետո կիմացվի պատերազմ է, թե ոչ»:

Սկսված համաշխարհային պատերազմը իր ավերիչ հորձանքի մեջ ներգրավեց շատ երկրներ. Ռուսաստանը և Ավստրիան ընկան պատերազմող տարբեր կողմերում: Լ. Իսիցյանը վերադարձավ հայրենիք: Բապառ խզվեց կապը մի կողմից՝ Ստրժիգովսկու, մյուս կողմից՝ Լ. Իսիցյանի և Թորամանյանի միջև:

ОБ ОДНОМ НАУЧНОМ СОДРУЖЕСТВЕ

Доктор архитектуры В. М. АРУТЮНЯН

(Резюме)

В книге Иосифа Стржиговского «Die Baukunst der Armenier und Europa» (т. I и II, Вена, 1918) упоминается об участии молодого ученого, тогда еще студента Венского университета и научного сотрудника организованного при нем исследовательского Института истории искусств, Левона Степановича Лисициана (1892—1921) в экспедиции 1913 г. в Армению (с целью изучения памятников армянской архитектуры) и о его вкладе в создание названной монографии. Значительный свет на этот вопрос проливают письма Л. С. Лисициана (написанные родителям из Вены в 1912—1914 гг.), ставшие доступными для пользования лишь недавно, после их передачи в Государственный исторический архив Совета Министров Армянской ССР (фонд № 428).

Судя по содержанию упомянутых писем, благодаря стараниям Л. С. Лисициана удалось наладить контакты между Стржиговским и рядом ученых Кавказа, снабдить Институт истории искусств нужной для начала исследовательской работы литературой и иллюстративным материалом по истории, археологии, искусству и зодчеству народов Кавказа. Лисициан принимал активное участие в организованных в институте семинарах, занимался разработкой армянских летописных источников, расшифровкой эпиграфических надписей, переводом с армянского на немецкий язык трудов по исследованию армянского зодчества и т. д.

Особенно следует отметить роль Л. С. Лисициана и его отца—видного педагога и ученого С. Д. Лисициана (в то время проживавшего в Тифлисе) в организации контактов между венским ученым и основоположником научного исследования армянской архитектуры Торосом Тораманяном и приглашении последнего в Вену весной 1913 г. Именно встреча двух ученых ускорила организацию осенью того же года исследовательской экспедиции в Армению, возглавленной И. Стржиговским, при участии Т. Тораманяна и Л. Лисициана. Помимо большой организаторской работы, Л. С. Лисициан усердно занимался сбором научного материала, над систематизацией которого после возвращения в Вену он трудился вплоть до начала первой мировой войны, когда был вынужден вернуться на родину. Молодой ученый был убит дашнаками в феврале 1921 г.